ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2022 թվականի հուլիսի 1-ի, ժամը 14:00-ի նիստի
N 13 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- Լեզուների ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Լուսինե Արմենի Հարությունյանի**, նույն ամբիոնի դոցենտներ, բանասիրական գիտությունների թեկնածու **Սուսաննա Ավետիքի Չալաբյանի**, բանասիրական գիտությունների թեկնածու **Արմինե Ռազմիկի Գրիգորյանի** և նույն ամբիոնի ասիստենտ **Քրիստինա Մելսի Թորգոմյանի «English for Economists - 2»** (անգլերենի ուսումնական ձեռնարկ տնտեսագետ ուսանողների համար) **ուսումնական ձեռնարկի** հրատարակությունը երաշխավորելու մասին հարցը:

Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, դոցենտ **Թ.Մ.Մկրտչյան:**

Զեկուցողը նշեց. հրատարակության ներկայացված ուսումնական ձեռնարկը նախատեսված է տնտեսագետ ուսանողների, տնտեսության տարբեր ոլորտներում աշխատող մասնագետների, ինչպես նաև անգլերենով հրատարակված մասնագիտական գրականությունից օգտվել ցանկացողների համար: Ձեռնարկը բաղկացած է 15 դասից: Յուրաքանչյուր դասի սկզբում ուսանողին առաջարկվում է տեքստ՝ համապատասխան բառացանկով և վարժություններ, որոնք նպաստում են ուսանողի բառապաշարի հարստացմանը, յուրացմանն ու ամրապնդմանը: Վարժությունների մի մասն ուղղված է անգլերենով մասնագիտական կարևորագույն եզրերի կուտակմանն ու յուրացմանը, ինչպես նաև տնտեսագիտության առանցքային հասկացությունների ավելի խոր ընկալմանը: Գրքում տեղ են գտել նաև լրացուցիչ ընթերցանության նյութեր՝ իրենց համապատասխան վարժություններով;

Ուսումնական ձեռնարկի վերաբերյալ ստացվել է 4 դրական կարծիք.

1) Շ.Ե.Ղազարյան՝ Գ.Վ.Պլեխանովի անվան Ռուսաստանի տնտեսագիտական համալսարանի երևանյան մասնաճյուղի օտար լեզուների № 2 ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու:

2) Օ.Բ.Բագրինցևա՝ «Աստրախանի պետական համալսարան» ԲԿԴՊԲ ՈՒՀ անգլերենի և տեխնիկական թարգմանությունների ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ:

3) Ա.Ս.Խաչատրյան՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի լեզուների ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու:

4) Լ.Լ.Ղազարյան՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի լեզուների ամբիոնի ասիստենտ:

Բոլոր կարծիքներում նշվում է, որ ներկայացված աշխատանքը պահանջարկ և հեռանկար ունեցող ուսումնական նյութ է, կազմված է ներկայացվող պահանջներին համապատասխան և առանձնանում է մի շարք առավելություններով՝ կուռ կառուցվածք, հարուստ բառապաշար, համալիր կերպով ներկայացված վարժությունների հավաքածու, որոնք կարող են նպաստել ուսանողների գիտելիքների ամրապնդմանը և լեզվական հմտությունների ու կարողությունների զարգացմանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.-

Հիմք ընդունելով գրախոսների դրական կարծիքները, լեզուների ամբիոնի, կառավարման ֆակուլտետի խորհրդի և համալսարանի գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողովի նիստերի որոշումները՝ լեզուների ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Լուսինե Արմենի Հարությունյանի**, նույն ամբիոնի դոցենտներ, բանասիրական գիտությունների թեկնածու **Սուսաննա Ավետիքի Չալաբյանի**, բանասիրական գիտությունների թեկնածու **Արմինե Ռազմիկի Գրիգորյանի** և նույն ամբիոնի ասիստենտ **Քրիստինա Մելսի Թորգոմյանի «English for Economists - 2»** (անգլերենի ուսումնական ձեռնարկ տնտեսագետ ուսանողների համար) **ուսումնական ձեռնարկը** երաշխավորել հրատարակության, 200 օրինակ տպաքանակով, «Տնտեսագետ» հրատարակչությունում (նախատեսված է հրատարակչական պլանով): Որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն. կողմ՝ 43, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Դարբինյան**

2022 թ. հուլիսի 1
Երևան